ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի և «Գյումրու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջև համագործակցության մասին

ք.Երևան «10» մայիսի 2023թ.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Ինստիտուտ), ի դեմս ռեկտորի պարտականությունները կատարող Անժելա Նուշիկյանի և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Գյումրու պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Քոլեջ), ի դեմս տնօրեն Մարինա Մարտիրոսյանի, (այսուհետ՝ կոչվելով Կողմեր).

Հիմք ընդունելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի №589 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №752-Ն որոշման հավելվածի 2-րդ և 3-րդ կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

I. Համաձայնագրի առարկան

1. Համաձայնագրի առարկան է՝ Քոլեջում միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսում ստացած և բարձր առաջադիմություն ցուցաբերած (միայն «Լավ» և/կամ «Գերազանց» գնահատականներ ունեցող) շրջանավարտների (այսուհետ՝ Շրջանավարտներ) Ինստիտուտում ուսուցումը շարունակելու կարգի և պայմանների սահմանումը:

II. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2. Ինստիտուտը՝

1) կազմակերպում և իրականացնում է Շրջանավարտների ուսուցումը Ինստիտուտի վճարովի համակարգում «Ֆիզիկական վերականգնում՝ կինեզիոլոգիա» մասնագիտության գծով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով Ինստիտուտին հատկացված մասնագիտություններին համապատասխան.

2) կազմակերպում է Շրջանավարտների ուսուցումը հեռակա ուսուցման 2-րդ կուրսից՝ ելնելով միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի, մասնագիտությունների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանությունից.

3) համագործակցում է Քոլեջի հետ՝ ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փոխհամաձայնեցման և կատարելագործման նպատակով.

4) ապահովում է ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ պայմաններ՝ նպաստելով համապատասխան մասնագիտությունների գծով ուսանողների ստացած գիտելիքների և գործնական հմտությունների կատարելագործմանը.

5) անհրաժեշտության դեպքում Քոլեջին ցուցաբերում է համապատասխան մեթոդական և մասնագիտական աջակցություն՝ փոխադրման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով:

3. Քոլեջը՝

1) համաձայնեցնում է համապատասխան մասնագիտությունների գծով ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը Ինստիտուտի հետ.

2) մշակում և Ինստիտուտի հետ համաձայնեցնում է փոխադրման ենթակա Շրջանավարտների ընտրության կարգը և նրանց գիտելիքներին ներկայացվող շեմային պահանջները.

3) մասնակից է դարձնում Ինստիտուտի համապատասխան մասնագիտությունների առաջատար մասնագետներին Քոլեջի Շրջանավարտների որակավորման քննությունների հանձնաժողովների աշխատանքներին՝ Ինստիտուտի ռեկտորի համաձայնությամբ:

III. Կողմերի պատասխանատվությունը

4. Համաձայնագրով ստանձնած պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Կողմերն ընդունում են, որ Համաձայնագրի շրջանակներում չեն կարող առաջանալ ֆինանսական պատրավորություններ, բացառությամբ՝ լրացուցիչ համաձայնագրերով նման պարտավորությունների սահմանված լինելու դեպքերի:

IV. Համաձայնագրի գործողությունը և դրանում փոփոխության կատարումը

6. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

7. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ՝ լրացուցիչ գրավոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Համաձայնագրի անբաժանելի մաս:

8. Համաձայնագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերի փոխհամաձայնությամբ կամ Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ ոչ ուշ քան մեկ ամիս առաջ այդ մասին մյուս Կողմին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով:

9. Սույն Համաձայնագիրը կազմված է հայերեն, երկու հավասարազոր օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

V. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ինստիտուտ	**Քոլեջ**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Այեր Մանուկյան 11	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրազի 3
Ռեկտորի պարտականությունները կատարող՝ _____ Ա. Լուշիկյան	Տնօրեն՝ _____ Մ. Մարտիրոսյան
Կ.Տ.	Կ.Տ.